

- 5 Եւնէր ցաւն զարքայն,
 եւ հառաչմամբ արձակեաց զհոգին.
 Եւ Հռոքսիանէ ողբով եւ կոծով
 տարեալ զմատն կալաւ զաչսն արքային:
 Դադարեցար Աղէկսանդրէ,
 հանգաւ աշխարհս ի դողմանէ.
 Զերծաւ կաւշիկդ ի յրուքեպէ,
 եւ թուրտ ի թափ ձեռաց բազկէ:
 Քակեցիր քաղաք ի հրմնէ,
 բազումք ջնջան յիւրեանց տոհմէ.
 10 Երբ քո աւուրբդ անչափ իցէ
 էր շարժեցեր զագգո յաշխարհէ:

9. ԵՒ ՀԻՌՔՍԻԱՆԵՆԷ ԸՍԷՐ ԶԿԵՓԸՅՍ ԸՌ
 ԱՂԷՔՍԸՆՆՐՆ

Ի ԶԸՔԸՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԿԸՐՈՂԷ

- Շուռ տուր տապանիդ ասեմ,
 արի կաց այ իմ սիրելի.
 Քանի կենաս յայտ զընդանդ
 վայելէ ի լոյսն արեւի.
 Արի ու քայլէ ոտաւքդ
 կամ արա ինձ պատասխանի.
 Սարսափն է ըսիրտս առեր,
 թէ եւ ինձ այսպէս հանդիպի:
 5 Աւաղ Հռոքսիանոսի
 որ եղայ ի տարակուսի.
 Դառնութեամբ կենաւք շրջիմ
 զաւրն ի բուն ողորմ ու լայի.
 Խնդրեմ զառաջին ըզսէրդ
 ի քէնէ որ խանդաղատի.
 Շատ խասրաթ ունիմ առ քեզ
 որ ճարտար լեզուն քո խաւսի: